պէս հասարակ ժողովրդոց պարտէ ունենալ երկու տեսակս, մինն որ վասն միամտաց հարկաւոր է աչօք ցուցանել, և միւսն որ վասն երկայնամտաց հարկաւոր է իրաւամբ և արդարութեամբ քարոզ կարդալ. նոյն գունակ ես սկսեցի ձեզ աչօք տեսողութեամբ և բանիւ իրաւամբ Գրքաւս այս ցուցանել, ոչ թէ 'ի գիտութենէ մտաց իմոց, և ոչ յինէն գոյացեալ ցանկութեամբ, և ոչ նոր իմն զարմանալեաւ իրօք՝ եթէ ոչ այն որ տեսի աչօք իմովք 'ի ժամանակս կենաց իմոց 'ի մէջ զանազան ազգի բարեպէս վարիւք կառավարութեանց հեշտութիւնն ամենայն դժուարութեան, հնարն մնալոյ ազատութեան և որոգայթն անփրծանելի վասն ամենայն վատթար արանց, զի հարկաւ մտցեն ընդ լծաւ բարեգործութեան, ընծայեմ առաթուր բարեպաշտ ազգին իմոյ, թէպէտ տխուր է իմ ձեզ ասելն որ ես ոչ գտայ շնորհ կրթութեան 'ի հրահանգս դպրութեան, և ոչ ժամանակ ընթեռնլոյ բուն Պատմութիւնն Հայոց, այլ այնքան որ 'ի մէջ պատմութեանց այլ ազգաց լուայ, և այնքան որ բարեգոյն Մովսէս Խորենացին եթող յիշատակ իւր վասն մեր՝ տոչորէ սիրտ իմ և սիրտ ամենայն արանց ազգասիրաց յոյժ, և իմ նայելով ճոխութիւնն ազգին իմոյ և բուրաստան և առատութիւն աշխարհին Հայոց ամենայն բարութեամբ և հարկաւոր իրօք լցեալ, և առողջ անդամք որդածնութեամբ